

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ԼՐԱԳՐԱՅԻՆ/ՏՊԱԳԻՐ/ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ /ՍՈՂՈՒԼ 1/

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՍՈՂՈՒԼ	ԼՐԱԳՐԱՅԻՆ/ՏՊԱԳԻՐ/ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1609B4/10
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ տպագիր/թերթ, հանդես, ամսագիր, հաղորդաթերթեր/ ժուռնալիստիկայի առանձնահատկությունների մասին: Յուրաքանչյուր ՁԼՄ ունի իրեն բնորոշ տիպերն ու տարբերակները: Եթե հեռուստատեսության համար դրանք պատկերն ու ձայնն են, ռադիոյի համար ձայնը, ապա տպագիր մամուլի համար առանձնանում են թղթային լինելը, ծավալը, չափսը, տառատեսակները, ձևավորման էլեմենտները, նկարազարդումները:</p> <p>Դասընթացը կողմնորոշում է ուսանողներին տարբերակել օրաթերթերի, շաբաթաթերթերի, ամսաթերթերի, ամսագրերի ու հանդեսների խմբագրություններում ընդունված աշխատանքի ձևաչափերը, մեթոդիկան: Ներկայացվում է տարբեր պարբերականների ստեղծման փիլիսոփայությունը, կառուցվածքը, կերպարը, նկարագիրը, ձևաչափերը, ծավալները, էջադրման սկզբունքները: Ժուռնալիստական աշխատանքի հոգեբանության հետ ներկայացվում են ստեղծագործության ուսումնասիրության հիմնական փուլերը և ուղղությունները, աշխատանքային գաղափարի պլանավորումն և կոնկրետացումը, ժուռնալիստական ավանդական և ոչ ավանդական մեթոդները: Ուսուցանվում են փաստից դեպի վավերագրական կերպար և հեղինակ-ընթերցող փոխգործակցության հիմնահարցերը, ժուռնալիստական երկի կոմպոզիցիոն կառուցվածքը, կոմպոզիցիոն ձևերի տիպերը և այլն:</p>
-------------------	---

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ	<ul style="list-style-type: none"> • ԳԻՏԵԼԻՔ- այն յուրահատկությունների մասին, որոնցով առանձնանում է տպագիր մամուլը: Գրել թերթերի ու ամսագրերի համար, նշանակում է խոսքով ներկայացնել այն միջավայրը, որը էլեկտրոնային ՁԼՄ-ները ստեղծում են իրենց հատուկ միջոցներով ձայն, պատկեր, աղմուկ, երաժշտություն և այլն: Պարբերական մամուլը պատմության սևագիր էջն է և այն ստեղծում են լրագրողները օգտագործելով պարբերական մամուլի ժանրային համակարգն ու վերնագրերի, խորագրերի, էջադրման սկզբունքները, տառատեսակները, գույները և այլն: • ԿԱՐՆՂՈՒԹՅՈՒՆ- գրել պարբերական հրատարակությունների համար, ապահովի տվյալ ՁԼՄ-ին հատուկ մասնագիտական, էթիկական նորմերին, տիրապետի տարբեր ձևաչափերի, տարբեր լսարանների համար նախատեսված թերթերի ու ամսագրերի խմբագրման հիմունքներին, հետևի ընթերցողի հետ հետադարձ կապերի հաստատմանը: • ՀՍՏՈՒԹՅՈՒՆ- տիրապետի մասնագիտությանը ներկայացվող պահանջներին, կոլեկտիվ գործունեության նրբություններին, տեղեկատվության հավաքման, մշակման ու տեքստի կառուցման
-----------------------------	--

հմտություններին: Կարողանա հասարակական երևույթները խորությամբ վերլուծել ու ներկայացնել արժանի մակարդակով, վարի խորագրեր ու բաժիններ, հետևողականություն հանդես բերել թեմայի շարունակականության հանդեպ, Ընթերցողին ներկայացնի թարմ ու օպերատիվ տեղեկատվություն, իրողությունները վերլուծի համակողմանի, տպագիր մամուլում քննարկված մեթոդներով:

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ

- ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 5
- ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ - 48
- ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 24
- ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 24
- ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 3

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախնական գիտելիքներ հայոց լեզվի և գրականության, հայ գրողների հրապարակա-խոսական նյութերի հետ ծանոթության, մամուլի միջոցներում հրապարակված գրական ու լրագրողական ստեղծագործությունների մասին: Ինչպես նաև տեղեկություններ նախասիրած ԶԼՄ-ների վերաբերյալ:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂՆԵՐ

Դասախոսություն , ինքնուրույն և խմբային աշխատանք

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՍԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Լրատվական արժեքներ, ինչն ենք մենք անվանում «նորություն» հասարակությունում:
- Նորությունների պատրաստումը՝ եռափուլ գործընթաց:
- Առաջին քայլերը՝ տեղեկատվության հավաքում, տեղեկատվության վերլուծում ու գնահատում, տեղեկատվության տարածում: Տեղեկատվությունը վերլուծություն լսարանի պահանջի իմացությամբ, հարակից տեղեկատվության դիտարկումով, լրատվական արժեքների ընկալումով, փաստերի կշռադատումով:
- Հեղինակից /աղբյուրը/ մեջբերումներ կատարելը, փորձագետների հիշատակումը, հեղինակին /աղբյուրը/ հիշատակելիս օգտագործվող բայերի մասին:
- Հիմնական լուր, հիմնական լուրի լիդ, կարևոր մանրամասներ, պակաս կարևոր մանրամասներ, էլ ավելի պակաս կարևոր մանրամասներ: Կարևորություն: Ինչպես ուղիղ լիդը վերաձևելք ակնարկային լիդի:
- Տեղեկատվություն հավաքելը: Գրում ենք նյութ: Կազմակերպում ենք տեղեկատվություն, գրուցում ենք սկզբնաղբյուրների հետ, առնչվում ենք սկզբնաղբյուրին, կազմակերպում հետաքննություն /երկրորդական աղբյուրներ/:
- Լուրի բովանդակությունը՝ (մի քանի տեսանկյուն) հրդեհների և հանցագործությունների լուսաբանումը, ելույթների, ժողովների, մամուլի ասուլիսների լուսաբանումը:
- Լուրերի կառուցման տարրերն ու ձևերը. վերնագիր, մեջբերում:
- Նյութի կառուցման ձևերը՝ Շրջված բուրգ, Ավազի ժամացույց, Բուրգ, Շեղանկյուն կամ «Ուտրոյ Սթրիթ Ջորնլի» բանաձևը:
- Թվարկման և ըստ բաժինների մասնատման հնարքը:
- Լիդ-Ավարտ, լրագրողի կողմից թույլ տրվող բնորոշ սխալները:

- Ինչպես գրել լիդ, ինչպես գտնել կիզակետը, ինչպես լավ լիդ գրել:
- Ինչպես ստեղծել թերթ/ամսագիր/, տպագիր հրատարակության փիլիսոփայությունը, կերպարը:
 - Հեղինակ-ընթերցող փոխգործակցության հիմնահարցեր:
 - Ժուռնալիստական երկի կոմպոզիցիոն կառուցվածքը. կոմպոզիցիոն ձևերի տիպերը՝ այուժե, ֆարուլա, արխիտեկտոնիկա (ներդաշնակության կերտում):
 - Կոմպոզիցիոն ձևերը լրագրային տարբեր ժանրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

1.Гуревич С.М. ГАЗЕТА: ВЧЕРА, СЕГОДНЯ, ЗАВТРА
М.: Аспект Пресс, 2004.
2.Марк Григорян.Пособие по журналистике
ЦЕНТР ЭКСТРЕМАЛЬНОЙ ЖУРНАЛИСТИКИ,Москва.2007

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1.д. рэндалл, Универсальный журналист.- ÏÑËÀÀ, 2007ã.
2. В. Ученова. БЕСЕДЫ О ЖУРНАЛИСТИКЕ, Издательство Молодая гвардия", 1985 г.
3.Տ.Ռեպկովա, Ինչպես ստեղծել պրոֆեսիոնալ լրագիր ժողովրդավարական հասարակության պայմաններում,Երևանի մամուլի ակումբ, 2003 թ.
Վ.Մայեր,Լրագրային գործ,1-2 հատոր,Երևանի մամուլի ակումբ, 2001 թ.

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ստուգողական աշխատանք,/ անհատական աշխատանք/
ամփոփիչ բանավոր ստուգում
Ընթացիկ ստուգումներ
Նախատեսված են 1 ընթացիկ գրավոր ստուգում՝ ստուգողական աշխատանք՝ 100 միավոր առավելագույն արժեքով; Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ 30,30,20,20 միավորային արժեքով; Եզրափակիչ ստուգումը բանավոր է՝ 100 միավոր առավելագույն արժեքով; Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ 30,30,20,20 միավորային արժեքով :Միավորների քայլը 5 է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ
ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1 – 10% (հաճախումներ)
2. Բաղադրիչ 2 – 20% (ընթացիկ ակտիվություն)
3. Բաղադրիչ 3 – 70% (ամփոփիչ ստուգում)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

Ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակը կրեդիտ/կրեդիտժամ-5/150

Հ/Հ	Թեմա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	Սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	Լրատվական արժեքներ: Ինչն ենք մենք անվանում նորություն: Ընդունված մի շարք սահմանումներ:	2					3	5
2.	Նորության արտասովորությունը: Նորությունների քննադատական գնահատումը: Որոնք են նախընտրելի թեմաները:				2		5	7
3.	Նորությունների պատրաստումը՝ եռափուլ գործընթաց:	2					5	7
4.	Ո՞ր դեպքերում հիշատակել հեղինակին(աղբյուրը): Հեղինակից աղբյուր/մեջբերումներ կատարելը: Փորձագետների հիշատակումը: Հեղինակին /աղբյուրը/ հիշատակելիս օգտագործվող բայերի մասին:				2		6	8
5.	Բազմակի աղբյուրների առկայությունը: Ուղղակի և անուղղակի մեջբերումներ: Հիմնական լուր Հիմնական լուրի լիդ	2					5	7
6.	Լիդ: Կարևոր մանրամասներ: Պակաս կարևոր մանրամասներ: Էլ ավելի պակաս կարևոր մանրամասներ:	2					5	7
7.	Ուղիղ լիդը ակնարկային լիդի վերաձևելու մասին: Տեղեկատվություն հավաքելու հմտություն: Կազմակերպում ենք տեղեկատվություն, զրույց սկզբնաղբյուրների հետ: Աղբյուրներ վկայակոչելը պարտադիր պայման:				2		6	8
8.	Տպագիր լուրի բովանդակությունը (մի քանի տեսանկյուն):				2		5	7
9.	Լիդի ոսկե կանոնները: Ինչպես գրել լիդ: Ինչպես լավ լիդ գրել: Ինչպես գտնել կիզակետը:				2		4	6
10.	Ինչպես ստեղծել թերթեր, ամսագրեր:	2					6	8

	Պարբերական մամուլի փիլիսոփայությունը, կերպարը, ձևաչափի տարրերը, ծավալը, կառուցվածքը:							
11.	Պարբերականների կառուցվածքը. Գրաֆիկական ձևավորման մասին: Փորձագետների կարծիքներ հայկական տպագիր մամուլի գեղակառույցի մասին:			2		6	8	
12.	Գեղակառույցը որպես թերթի հաջողության գրավական: /Ըստ Սիշել Քարթերի «Արդի լրագրական գեղակառույցը» գրքի/	2				5	7	
13.	Թերթի և ամսագրի գեղակառույցի տարրերը. ընտրված տառատեսակը. վերնագրի ոճը, սյունակ-ների բնականոն լայնությունը:			2		4	6	
14.	Թերթի, ամսագրի նկարագարդումը: /Իլյուստրացիա/ Նկարագարդումների դերը պարբերական մամուլում:	2				4	6	
15.	Լրագրային նյութ գրելուն օգնող հանձնարարականներ:	2				5	7	
Ընթացիկ ստուգում 1							12	
Ընթացիկ ստուգում 2							12	
Ամփոփիչ ստուգում							20	
Ընդամենը							150	